# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-1

ք.Երևան «27» «04» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Լեբրոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Ավետիսյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 01.02.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկները 2020թ.-ի հունիսի 1-ից անցնում են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության, և քրեակատարողական ծառայության կողմից, 2020 թվականի ընթացքում, նոր սննդամթերքի ձեռքբերում և մատակարարում չի իրականացվելու, ուստի կողմերը որոշեցին՝ Պայմանագրի գնի 6,5 տոկոսի շրջանակում կատարել Պայմանագրով նախատեսված ապրանքների փոխարինում մեկը մյուսով՝ պահպանելով Պայմանագրի ընդհանուր գումարը և ապրանքների միավոր գները, ինչպես նաև հավաստել, որ նշված փոփոխությունը հանգեցնում է պայմանագրի ավելի նպատակային և արդյունավետ իրականացմանը:

1.2 Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ սննդամթերքի քանակներում կատարել փոփոխություններ, մասնավորապես՝

Պայմանագրով նախատեսված՝ 4000 լիտր «մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 1450 լիտր, որի գումարը կազմում է՝ 406000 (չորս հարյուր վեց հազար) ՀՀ դրամ, փոխարենը ավելացնել հետևյալ սննդամթերքների քանակները՝

1) «արևածաղկի ձեթ, ռաֆինացված, (զտած)» ապրանքատեսակի քանակը ավելացնել 200 լիտրով, որի գումարը կազմում է՝ 101000 (մեկ հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ,

2) «կարագ» ապրանքատեսակի քանակը ավելացնել 90 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 216000 (երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ,

3) «պանիր, լոռի» ապրանքատեսակի քանակը ավելացնել 55,625 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 89000 (ութսունինը հազար) ՀՀ դրամ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-20/5-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ 0097, |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Նորաշեն թղմ./Շ/27/72 բն. |
| Հ/Հ 900011175016 | ՎՏԲ Հայաստան բանկ |
| ՀՎՀՀ 02204739 | Հ/Հ 16062003796200 |
| | ՀՎՀՀ 01287026 |
| ՔԿ ծառայություն Ա.Ղազարյան | Տնօրեն՝ Ն.Ավետիսյան |
| /ստորագրություն/ Կ.Տ. | /ստորագրություն/ Կ.Տ |